ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<29>> հուլիսի 2013թ. N 322

Ք.Արմավիր

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լեռնամերձ համայնքի բնակիչ Լաուրա Ալբերտի Սարգսյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Վաղարշապատի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետի 2013 թվականի հուլիսի 22-ի N 226 գրությունը

***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Լաուրա Ալբերտի Սարգսյանին հատկացնել 50000 /հիսուն հազար/ դրամ միանվագ օգնություն:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

50.0


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ք. Էջմիածին, Մ.Մաշտոցի փ. 1 Հեռ. 0231-53852 1 M.Mashtots st., Echmiadzin Tel.: . 0231-53852


N 226

"22" 07 2013թ

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայտնում եմ Ձեզ, որ Լեռնամերձ համայնքի Չարենցի 9 հասցեում բնակվող Լաուրա Սարգսյանը հաշվառված է Վաղարշապատի ՍԾՏԳ-ում 29.09.2006 թ-ից, ստացել է ընտանեկան նպաստ մինչև 2011թ-ի օգոստոս ամիսը ներառյալ:Նպաստը դադարեցվել է չփաստագրվելու պատճառով:Հաշվառված է Սևանի Դդմաշեն գյուղում,հանգուցյալ ամուսնու տանը և չի ցանկացել հաշվառվել Լեռնամերձ գյուղում ամուսնու տան նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու նպատակով:Տուն չունի, ներկայումս ժամանակավորապես բնակվում է ծնողների տանը:Ունի երկու ծնողազուրկ երեխաներ,որից մեկն անչափահաս, իսկ մյուսը 2-րդ խմբի հաշմանդամ: Ընտանիքի միակ եկամուտը երեխաների թոշակն է, որը կազմում է 28600 դրամ:Գտնվում է սոցիալապես ծանր վիճակում,ունի օգնության կարիք:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՍԾՏԳ-ի ՊԵՏ՝ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ՝ Մ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

21.12.2017 N 574

50.0